



Մ ՈՒՐՔ Զ ԱԿՈՐ

Մ Ա Ա Ձ Ն Ո Ր Դ Ա Ն Ի Ս Ս Մ Ա Յ Ր Ե Կ Ե Ղ Ե Յ Ի



Կ Ա Ն Ա Ձ Կ Ի Ր Ա Կ Ի

26 ԱՊՐԻԼ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Հոգեւոր Պարտէզ	Էջ 2
Կանաչ Արարողութիւն	Էջ 4
Ծանուցում	Էջ 8

Գալիլիայի ու Սամարիայի մէջ խաղաղութիւն կը վայելէր եւ կը զօրանար: Ս. Հոգիի օգնութեամբ հաւատացեալները կը բազմանային եւ Տիրոջ երկիւղովը կ'ապրէին:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»
ԳՐՔԷՆ
(9.23-31)

Ժամանակ մը վերջ, Դամասկոսի հրեաները որոշեցին Սօղոսը սպաննել: Սակայն Սօղոս իմացաւ անոնց նենգութիւնը, թէ՛ գիշեր ցերեկ կը հսկէին քաղաքին դռներուն առջեւ, որպէսզի զինք սպաննեն: Ուստի հաւատացեալները զինք գիշեր մը զամբիւղի մը մէջ դնելով պարիսպէն վար իջեցուցին:

Սօղոս Երուսաղէմ եկաւ եւ կը ջանար հաւատացեալներուն հետ շփման մէջ մտնել. բայց բոլորն ալ կը վախնային իրմէ, չհաւատալով թէ Քրիստոսի աշակերտ դարձած է: Սակայն Բառնաբաս առաւ Սօղոսը, առաքեալներուն տարաւ եւ անոնց պատմեց թէ ի՛նչպէս Սօղոս ճամբուն վրայ Տէրը տեսած եւ անոր հետ խօսած է, եւ թէ ի՛նչպէս Յիսուսի անունով համարձակօրէն քարոզած է Դամասկոսի մէջ: Անկէ ետք Սօղոս առաքեալներուն հետ կը մնար ու կը շրջէր Երուսաղէմի մէջ, եւ համարձակօրէն կը քարոզէր Տէր Յիսուսի անունով: Կը խօսէր ու կը վիճէր յատկապէս յունախօս հրեաներուն հետ, որոնք զինք սպաննելու ձեւ մը կը խորհէին: Հաւատացեալ եղբայրներ երբ իմացան, Կեսարիա փախցուցին Սօղոսը, եւ հոնկէ ալ Տարսոն ղրկեցին:

Եկեղեցին ամբողջ Հրէաստանի,

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(2.1-10)

...մէկգի՛ ձգեցէք ամէն տեսակի չար մտածում ու նենգութիւն, կեղծաւորութիւն ու նախանձ եւ ամէն տեսակի չարախօսութիւն: Որպէս հաւատքի նորածին մանուկներ՝ Աստուծոյ խօսքի անխարդախ կաթին փափաքեցէք, որպէսզի անով աճիք եւ փրկութեան հասնիք: «Անգամ մը որ Տիրոջ խօսքին համը առնէ՛ք, պիտի տեսնէ՛ք թէ քաղցր է ան»: Մօտեցէ՛ք անոր, Քրիստոսի, որովհետեւ ինքն է այն կենդանի վէմը, որ թէպէտ մարդոցմէ մերժուած, բայց Աստուծմէ ընտրուած պատուական վէմն է: Այդպիսով դուք ալ որպէս կենդանի քարեր՝ Քրիստոսի վէմին վրայ կը կառուցուիք իբրեւ հոգեւոր տաճար. իւրաքանչիւրդ կը դառնաք անարատ քահանաներ եւ Յիսուսի Քրիստոսի միջոցաւ հոգեւոր ընդունելի պատարագ կը մատուցանէք Աստուծոյ:

Որովհետեւ մարգարէութեան մէջ գրուած է.

«Ահա ես Սիոնի մէջ կը դնեմ ընտրուած վէմ մը, պատուական անկիւնաքար մը. անոր հաւատացողը յուսախաբ պիտի չըլլայ»:

Քանի դուք հաւատացիք Քրիստոսի, անիկա ձեզի համար պատուական վէմ եղաւ. մինչդեռ չհաւատացողներուն

համար անհկա «Այն ֆարն է, գոր թեպէտ շինողները մերժեցին գործածել, բայց յետոյ անկիւնաքար եղաւ», կամ՝ «Այն ֆարն է՝ որ գլորումի եւ գայթակղութեան առիթ» պիտի ըլլայ անոնց համար որոնք Աստուծոյ խօսքը անհամոզիչ գտնելով կը գայթակղին, ինչպէս որ Աստուած նախատեսած էր:

Գալով ձեզի, դուք ընտրուած սերունդ մըն էք, թագաւորելու կոչուած քահանաներ, սրբուած նոր ազգ մը, Աստուծոյ սեփական ժողովուրդը. եւ ձեր պարտականութիւնն է քարոզել զօրութիւնը անոր՝ որ ձեզ խաւարէն իր սքանչելի լոյսին կանչեց: Որովհետեւ հիմա Աստուծոյ ժողովուրդն էք, մինչ նախապէս չէիք. հիմա իր ողորմութիւնը կը վայելէք, մինչ նախապէս զրկուած էիք անկէ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(2.23-3.12)**

Ձատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի ինք գիտէր թէ ի՞նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողեմոս անունով փարիսեցի մարդ մը կար, հրեայ իշխան մը, որ գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապետ, գիտենք որ դուն Աստուծոյ կողմէ զրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»: Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցիր, որ եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»: Նիկողեմոս հարցուց անոր. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի՞ է բան է որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»: Յիսուս պատասխանեց. «Վստահ եղիր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն

«Զըլլայ որ փրկութեան նամբէն հեռանալ»:

չծնի՝ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի՝ թէ պէտք է կրկին ծնիք: Հովը ուր որ կ'ուզէ կը փչէ. դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք հոգիէն կը ծնին»:

Նիկողեմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի ատիկա»: Յիսուս պատասխանեց. «Դուն որ Իսրայէլի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, ատիկա չե՞ս գիտեր: Վստահ եղիր, թէ ինչ որ գիտենք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմ»:

ՀՈԳԵԻՈՐ ՊԱՐՏԷՉ
ՀԵՌՈՒԱԿ՝ ԳԱՌՆԻԿ Զ.Գ.

«For rich and poor - it does not make a difference - a garden is a place where body and soul are in harmony»,
VIGEN GUROIAN

Զեր եղած ֆաղափակրթութիւն մը, ուր մարդկութիւնը տագնապահար դառնար կենսոլորտի հարցով: Նախ՝ որովհետեւ աշխարհը այսօր չէր պզտիկցած կամ հեռաւորութիւնները այսօր չէին կարեցած. եւ երկրորդ ու գլխաւորաբար՝ որովհետեւ չէր եղած ժամանակ՝ երբ բնութեան չարաշահումը այսօր տարածուած ըլլար եւ անոր հանդէպ յարգանքը այսօր կորսուած:

Արդի մարդը դէմ յանդիման կը գտնուի կենսոլորտի կործանման, որուն հետեւանքները ահեղի պիտի ըլլան՝ եթէ դարձը չարձանագրուի: Երբ դարձ կ'ըսեմ՝ կը հասկնամ ֆիզիքական եւ հոգիի աշխարհիկներդ աշխարհակութիւնը: Այս աշխարհը պարտէք

մըն է. որպէսզի այս պարտեզը չփնանայ՝ մարդկութիւնը աշխատանք մը ունի տանելիք, եւ այդ աշխատանքը ներդաշնակել է իր ֆիզիքական եւ հոգեւոր պահանջները: Ինչպէ՞ս կարելի է ներդաշնակել այդ երկուքին պահանջները:

Պօղոս առաքեալի մէկ խօսքը կայ, որ կ'ըսէ. *«ձեր մարմինները տաճարն են Ս. Հոգիին, որ Աստուծոյ առիք եւ ձեր մէջ կը բնակի»* (Ա. Կր 6.19): Կ'նուգեմ ասկէ մեկնիլ եւ Աւետարանին յորդորը տալ աշխարհ-մարմինին մասին: Վերջ ի վերջոյ, ըստ Աստուածաշունչին, մարդկային մարմինը արարուած է երկրի հողէն (գիտես որ առաջին մարդուն անունը «Ադամ» կոչուած է, եւ «Ադամ» բառը եկած է «ադամա» յէն, որ «բարեբեր հող» կը նշանակէ): Եւ երկիրը հոյամարմին է:

Ինչ որ Աստուած ստեղծեց տեսաւ, որ բարի է: Եւ Աստուած իր ստեղծագործութիւնը վստահեցաւ մարդուն, շարականը կ'ըսէ՝ գայն տնտես կարգեց ստեղծագործութեան: Սակայն մարդը Արարիչի պատուիրանին հակառակ շարժեցաւ. որ ըսել է՝ մերժել վստահիլ վստահողին: Հարցը հիմնականին մէջ բարիի ու չարի գիտութեան խորհրդաւոր ծանկնուտելուն կամ չուտելուն չի վերաբերիր այնքան, որքան վստահողին վրայ, այսինքն՝ Աստուծոյ նկատմամբ վստահութիւն չունենալուն: Անվստահութիւնը սկիզբն է անկումին: Եւ երբ մէկուն գործ մը վստահած ես, բայց ինք իր հիմնական գործը՝ այսինքն իրեն վրայ եղած վստահութիւնը կ'անտեսէ կամ կ'արհամարհէ, թէ՛ ինքը եւ թէ գործը ձախողութեան կը մատնուին: Նոյնպէս եղաւ ստեղծագործութիւնը: Նոյն առաքեալը կ'ըսէ, թէ ստեղծագործութիւնը կը սպասէ փնացումէ ազատագրութեան (հմմտ Հո 8.21): Արդ, ինչպէ՞ս կարելի է անիկա: Ներդաշնակելով անոր ֆիզիքական եւ հոգեւոր պահանջները: Իսկ ինչպէ՞ս կարելի է ներդաշնակել ստեղծագործութեան այդ պահանջները: Աստուծոյ հետեւողներուն «մարմինին» փրկութեամբ (նոյն 8.23): Բայց ինչպէ՞ս կարելի է արժանի ըլլալ անոր.

ա.- Սեփական մարմինները Աստուծոյ փառքին ծառայեցնելով, եւ ոչ թէ զանոնք որեւէ բանի գերի դարձնելով (Ա. Կր 6.12): Գերի դարձած մարմինները՝ կը մասնակցին ամէն ինչ գերի դարձնելու ընթացքին, որ կորուստի կը տանի:

բ.- Աստուծոյ ծառայելով: Աստուծոյ ծառայել կը նշանակէ «նորոգուած միտքերով նոր մարդ» ըլլալ: Նոր մարդը իր հաւատքի փորձառութենէն մեկնելով լաւը կ'ընտրէ, այսինքն՝ կ'ընտրէ ինչ որ բարի է, ընդունելի եւ կատարեալ է Աստուծոյ կամքին (Հո 12.2): Նոր մարդը ամէն օր ինքզինք կը նորոգէ. ու ինքզինք նորոգելով՝ կը մասնակցի ամէն ինչ նոր դարձնելու ընթացքին, որ ստեղծագործութեան ազատագրութեան կը տանի:

Ուրեմն, նախ եւ առաջ կենսոլորտի հարցին լուծումը հաւատքի հարց մըն է, երկրորդ՝ բարոյական հարց մըն է, եւ երրորդ՝ տնտեսելու հարց մըն է: Որպէսզի կենսոլորտի համաշխարհային աղէտ մը կանխուի՝ համայն մարդկութիւնը անմիջական ստիպողութեան առջեւ է մշակելու ընդհանուր պատասխանատուութիւն մը թէ՛ կրօններուն միջեւ, թէ՛ բարոյագիտական մակարդակի վրայ եւ թէ՛ տնտեսութեան:

Հանդիպեցայ քանի մը կենսոլորտային տասնաբանեայ պատուիրաններու: Կ'նուգեմ անոնցմէ մէկը թարգմանաբար ներկայացնել իբր յորդորական մը աշխարհ-պարտեզին պահպանման եւ մշակումին: Հեղինակը Աստուած ինքը չէ, այլ եկեղեցական մը՝ Գարլօ Ռոչչէթթա անուն: Սակայն յայտնապէս ան գրած է պատասխանատուութեամբ, եւ Աստուծոյ անունը պարապ տեղը իր բերանը չէ անած:

Ըստ Ռոչչէթթա եպիսկոպոսի, Աստուած կ'ըսէ.

1.- *Ես եմ քու Տէր Աստուածդ, ուստի բնութեան կարգին մէջ վտանգի եւ մահուան կացութիւններ մի՛ ստեղծեր, յատկապէս երբ հաւանական է, որ անոնք մնայուն եւ անհակազուելի դառնան:*

2.- *Ստեղծած աշխարհիս հետ բրտութեամբ մի՛ վարուիր եւ մի՛ վնասեր անոր ամբողջութեան: Կայ «կենսոլորտային մեղք» մը՝ որ զիս կը դառնացնէ, ինչպէս զիս կը դառնացնեն անհատական կամ ընկերային մեղքերը:*

3.- *Յարգէ՛ կեանքի դրոյթեան (life-system) միութիւնը եւ արարուածներուն միջեւ գոյութիւն ունեցող փոխադարձ կախումնաւորութիւնը: Մարդկութեան ապագան վտանգուած է: Զգաստ վարք մը ունեցիր. թող անիկա բնութեան ու*

հասարակաց բարիքներուն հանդէպ ըլլայ արդար եւ յարգալից:

4.- Յարգէ՛ ապրող արարածներուն, բուսական եւ կենդանական աշխարհին զանազանութիւնը. անիկա բոլորին տրուած պարգեւ մըն է եւ հարստութիւն մը. զայն մի՛ աղքատացներ կամ մի՛ փճացներ: Գնահատէ՛ կենսազանազանութիւնը. արժեւորէ՛ զայն եւ նպաստէ՛ անոր զարգացման:

5.- Դուն պէտք չէ որ տնտեսական ժողովրդավարութիւնը, ընկերային արդարութիւնը եւ իրերօգնութիւնը (solidarity) սպաննես յանուն տնտեսական եւ ֆինանսական ուժերու, որոնք փոքր գործառուներու (entrepreneurs) ազատութիւնը, ստեղծագործականութիւնը եւ նախաձեռնութիւնը կը ջնջեն:

6.- Դուն պէտք չէ որ ծինական ժառանգութիւնը (genetic patrimony) եւ մարդկային ծինային կազմածը (genome) գործածես սեփական շահ կամ հարստութիւն ձեռք ձգելու համար. ամէն ինչ որ արձանագրուած է ստեղծագործութեան մէջ, պէտք է բաշխուի եւ ծառայէ համայն մարդկութեան օգտին:

7.- Դուն պէտք չէ որ գողնաս կամ աղքատութեան եւ տկարներու չարաչահման նոր կերպեր ստեղծես՝ գործածելով խեղ (perverse) տնտեսական դրութիւն մը, ուր աղքատները աւելի կը հարստացնեն հարուստները:

8.- Դուն պէտք չէ որ սուտ վկայութիւն տաս սպառողներուն՝ արտադրութիւններուն մասին սուտ խօսելով, նաեւ անվստահելի ու հիւանդութիւն պատճառող ուտեստեղէն արտադրելով:

9.- Դուն պէտք չէ ցանկաս երկրագործութեան մը, որ անանուն եւ առանց հողին կապուած մշակներու կը զարգացուի: Գնահատէ՛ «տնտես»ին եւ «հողամշակ»ին գործը, որ ես մարդուն ի սկզբանէ վստահեցայ:

10.- Դուն պէտք չէ որ փճացնես վայրիւ աւանդական արտադրութիւնները կամ գոնէ անոնցմէ որակաւորները, որոնք հողին համն ու հոտը ունին. մի՛ ապականեր առողջ հատիկները եւ կենդանական մթերքը՝ մշակումներով կամ սննդատուութեամբ՝ որոնք ապահով չեն: Բնութեան մէջ գործէ այնպէս, որ զայն աճեցնես, եւ ոչ թէ

սպառնաս կամ կոպտօրէն վարուիս անոր շատ նուրբ հաւասարակշռութեան հետ:

Արդարեւ, աշխարհը պարտէզ մըն է. իսկ անոնք որ կը հաւատան՝ անոնց համար հոգեւոր պարտէզ կ'ըլլայ անիկա: Եւ հոգեւոր պարտէզը դրախտն է, խորհրդանշանը Աստուծոյ մէջ կեանք ունենալուն:

ԿԱՆԱԶ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՒՆ
(ԿԵՆՍՈՒՈՐՏԻՆ ՀԱՄԱՐ)

Այս արարողութիւնը գրուեցաւ Բարեշան Առաջնորդ՝ Գրշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի հրամանով, Արժ. Տ. Գառնիկ Քենյ. Գոյունեանի կողմէ: Այսօր Գանատայի Հայոց Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ պիտի կարդացուի:

Ա.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Բ.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Ընկալ, կեցո՛ր եւ ողորմեա:

Գ.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դ.

ՇԱՐԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ
Աստուածածին ամպ լուսաւոր,
որ զցօղն կենաց հեղեր յերկիր բանաւոր.
եւ զնախամօրն շիջուցեր
պարտեացն զհուր.
անդադար ձայնիւ զքեզ բարբերանեմք,
եւ հոգեւոր երգով մեծացուցանեմք:

Տեղի անտանելի Բանին,
եւ երկիր վայրափակ

յորուժ լոյսն ագանիցի.
եւ արեւելք արեգական արդարութեան.
անդադար ձայնիւ...

Ձքեզ կատարումն մարգարէից.
կուսական քո ծննդեամբ,
որով բնութեանս քակտեցան օրէնք.
հրաբուն սեռիցն փոխադրեալ
ի լուսաճեմ խորանսն.
անդադար ձայնիւ...

Ե.

ԵՐԳ ԱՐԱՐԱԾՈՅ*

Ամենաբարձեալ, ամենագօր, ամենաբարի
Տէր,

Քեզի՛ համար են գովաբանութիւնները,
փառաբանութիւնները, եւ պատիւն ու բոլոր
օրհնաբանութիւնները.

միայն Քեզի, ո՛վ ամենաբարձեալ, կը
վայելեն անոնք,

եւ ոեւէ մարդ էակ արժանի չէ Քու անունդ
տալու:

Գովաբանեալ ես Դուն, ո՛վ իմ Տէր, Քու
բոլոր ստեղծածներուդ հետ.

յատկապէս տիար եղբայր արեւուն,
որով ցերեկը կ'ըլլայ եւ որուն միջոցով մեզ
կը լուսաւորես.

անիկա գեղափայլ է եւ մեծվայելչութեամբ
ճառագայթուն.

նմանութիւնդ ունի անիկա, ո՛վ
ամենաբարձեալ:

Գովաբանեալ ես Դուն, ո՛վ իմ Տէր, քոյր
լուսնին եւ աստղերուն համար.

զանոնք երկնքին մէջ հաստատեցիր
իբր յատակ, թանկարժէք եւ ճաճանչագեղ
լուսատուներ:

Գովաբանեալ ես Դուն, ո՛վ իմ Տէր, հովին
համար, եւ երկնակամարին՝ թէ՛ ամպամած
եւ թէ՛ պայծառ, ինչպէս նաեւ օդի բոլոր
փոփոխութիւններուն համար. քանզի անոնց
միջոցով է, որ կը խնամես արարածներդ:

Գովաբանեալ ես Դուն, ո՛վ իմ Տէր, քոյր
ջուրին համար,

որ շատ օգտակար է եւ խոնարհ եւ
թանկագին եւ ջինջ:

Գովաբանեալ ես Դուն, ո՛վ իմ Տէր, եղբայր
կրակին համար,

* Ֆրանչեսկո Ասսիսցի:

որուն միջոցով գիշերը կը լուսաւորես.
անիկա գեղեցիկ է եւ ուրախ եւ բորբ եւ
գօրաւոր:

Գովաբանեալ ես, ո՛վ իմ Տէր, մեր քոյր
մայր երկրին համար,

որ կը պահէ մեզ եւ կը կերակրէ,
եւ որ գունագեղ ծաղիկներով ու տերեւներով
բազմազան պտուղներ կու տայ.

Գովաբանեալ ես, ո՛վ իմ Տէր, անոնց համար
որ Քու սէրդ ունենալով կը ներեն, եւ վիշտ
ու խռովք կը տանին:

Երանի՛ անոնց որոնք խաղաղութեան մէջ
կը յարատեւեն,

որովհետեւ Քեզմով պիտի պսակուին, ո՛վ
ամենաբարձեալ:

Գովաբանեցէ՛ք իմ Տէրը, փառատրեցէ՛ք
զԱյն,

եւ ամենայն խոնարհութեամբ ծառայեցէ՛ք
Անոր: Ամէն:

Զ.

ԼԱԹԵՐՅՈՒՄ ՅՈՒՐ ԳՐԵԷՆ

Ո՛վ ես դուն, ո՛վ մարդ,
որ կը փորձես իմ իմաստութիւնը նսեմացնել
անիմաստ խօսքերով:

Այր մարդու պէս դիմացս կեցիր, հարցնեմ
քեզի՝ եւ պատասխան տուր ինծի:

Ո՛ւր էիր, երբ ես աշխարհի հիմերը կը
դնէի.

եթէ այնքան խելացի ես՝ պատմէ՛ ինծի այդ
մասին:

Ո՛վ որոշեց անոր չափը, գիտե՞ս,
ո՞վ դրաւ անոր սահմանները, ըսէ՛:

Կեանքիդ մէջ բնաւ պատահե՞ր է, որ
հրամայես եւ լոյսը բացուի,

կամ արշալոյսը իր կարգը առնէ եւ իր
թեւերով պատէ երկիրը:

Է.

ԼԱԹԵՐՅՈՒՄ ՊՕՏՈՍ ԱՌԱՔԱՅԻ

ՀՈՍՏԱԵԾՈՒԵՐՈՒՄ ԳՐԾ ՆԱՄԱԿԷՆ

Ամբողջ ստեղծագործութիւնը ակնդէտ
կը սպասէ, որ Աստուած իր որդիները
յայտնէ: Արդարեւ, ստեղծագործութիւնը

ինք եւս մարդուն հետ ակամայ
դատապարտութեան ենթարկուեցաւ

Աստուծոյ հրամանով, որ սակայն նաեւ

սա յոյսը տուաւ, թէ ստեղծագործութիւնը ինք եւս պիտի ազատագրուի փճացումի դատապարտութենէն, մասնակից դառնալու համար Աստուծոյ որդիներուն ազատութեան փառքին: Եւ գիտենք, թէ մինչեւ հիմա ամբողջ ստեղծագործութիւնը երկունքով կը հեծէ այդ ազատագրութեան հասնելու համար: Բայց ո՛չ միայն ստեղծագործութիւնը, այլ մենք եւս, որ Ս. Հոգին ստացած ենք իբրեւ Աստուծոյ պարգեւներուն երախայրիքը, մենք ալ ներքնապէս կը հեծենք՝ ակնդէտ սպասելով որդեգրութեան, այսինքն մեր մարմինին փրկութեան:

Ը.

Դպրաց Դասէն

Ալէլուիա, ալէլուիա:

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, եւ զարարածս ձեռաց նորա պատմէ հաստատութիւն:

Սարկաւագ

Ալէլուիա, Օրթի:

Եկեղեցական

Խաղաղութիւն ամենեցուն:

Դպրաց Դաս

Եւ ընդ հոգւոյդ քուս:

Սարկաւագ

Երկիւղածութեամբ լուարուք:

Եկեղեցական

ՄԻՐԵՅ ԱԷՏԱՐԱՐԱ ՅԻՈՒԻՍ ՔՐՐԱՏՈՐ

ՈՐ ԸՍՏ ՅՈՎԱԿԻՄ:

Դպրաց Դաս

Փառք քեզ, Տէր, Աստուած մեր:

Սարկաւագ

Պոռոխումէ:

Դպրաց Դաս

Ասէ Ասարւած:

Եկեղեցական

Ի Հօրէ Լոխոյ

Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն: Նա էր ի սկզբանէ առ Աստուած: Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ եղեւ: Նովաւ կեանքն էր, եւ կեանքն էր լոյս մարդկան: Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու:

Եղեւ այր մի առաքեալ յԱստուծոյ, անուն նմա Յովհաննէս: Սա եկն ի վկայութիւն

զի վկայեսցէ վասն Լուսոյն, զի ամենեքին հաւատասցեն նովաւ: Ոչ էր նա Լոյսն, այլ զի վկայեսցէ վասն Լուսոյն:

Էր Լոյսն ճշմարիտ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ, որ գալոց է յաշխարհ: Յաշխարհի էր, եւ աշխարհ նովաւ եղեւ, եւ աշխարհ զնա ոչ ծանեաւ: Յիւրսն եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալանն: Իսկ որք ընկալանն զնա՝ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատասցեն յանուն նորա. ոյք ոչ յարենէ եւ ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն, այլ յԱստուծոյ ծնան: Եւ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ:

Թ.

Եկեղեցական

Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա:

Տէր Աստուած, ո՛վ Արարիչը տիեզերքին եւ ամբողջ գոյութեան: Ահա քու բազմամեղ ծառաներդ եւ աղախիններդ անճառելի Սրբութեանդ մօտենալով եւ կեցած՝ քիչ մը վար քան հրեշտակները, սրտի խորերէն աղօթք կը մատուցենք Քեզի, Նախախնամողիդ, մեր անարժան շրթներով:

Անսահման բարեգթութեամբդ, Տէր, ներէ՛ մեզ, եւ խոնարհեցնելով ականջդ՝ լսէ՛ մեզ:

Կը խոստովանինք Քեզ, ո՛վ Լոյս: Դուն արարչութեանդ առաջին օրը իբր նշան էութեանդ յաւիտենական լուսափայլումին՝ ըսիր. «Եղիցի լոյս», եւ լոյս եղաւ:

Կը խոստովանինք Քեզ, ո՛վ Երկնաւոր, որ թէ՛ ի վեր ես քան կամարը երկնքին, եւ թէ՛ ամենուրեք ես: Դուն արարչութեանդ երկրորդ օրը երկինքը հաստատեցիր, ըսելով՝ «Եղիցի հաստատութիւն ի մէջ ջրոցդ, եւ եղիցի մեկնել ի մէջ ջուրցդ եւ ջուրց»»: Ասիկա, Տէր, նաեւ պատգամ է յաւերժական: Քանզի հաստատութեան վերի ջուրերը Որդիիդ ակնարկած ջրացայտ աղբիւրները կ'այլաբանեն, իսկ վարի ջուրերը՝ մարմնական եւ հոգեկան եւ իմացական բոլոր կիրքերն ու ցանկութիւնները: Անոնք որ զՔրիստոս կը փնտռեն, Տէր, անոնց սրտերը աղբիւրներու կը վերածես, ուրկէ յաւիտենական կեանքի ջուրը կը բխի:

Կը խոստովանինք Քեզ, ո՛վ Մշակ:

Արարչութեան դերը որդի օրը ցամաքը երեւցաւ, ըստ հրամանիդ թէ՛ «Ժողովեսցին ջուրքդ որ ի ներքոյ երկնից ի ժողով մի, եւ երեւցի ցամաքն»։ Եւ ապա երկիրը կանաչ խոտ, եւ սերմ տուող ու իր տեսակին պէս պտղաբեր ծառ հանեց։ Անիկա կը նախապատմէր քեզի հաւատացողներուն այն գործերը, որոնք Քեզ փառաբանելու կը ծառայեն։

Կը խոստովանինք Քեզ, ո՛վ Լուսարար։ Արարչութեանդ չորրորդ օրը երկնքի լուսաւորները ստեղծուեցան, ըստ հրամանիդ թէ՛ «Եղիցին լուսաւորք ի հաստատութեան երկնից՝ ի լուսաւորութիւն ի վերայ երկրի»։ Արեգակը համեստագոյն օրինակն է Որդիիդ, իսկ լուսինը օրինակն է եկեղեցիիդ։ Եւ ինչպէս որ լուսինը արեւէն առնելով իր լոյսը՝ երկիրը կը լուսաւորէ, նոյնպէս ալ եկեղեցին իր լոյսը Քրիստոսէ կ'առնէ եւ ժողովուրդը անգիտութենէ ի գիտութիւն կը բերէ՝ զայն լուսաւորելով։ Հրամանդ, Տէր, աստղերն ալ արարեց, այսինքն՝ օրինակները Աբրահամին, Իսահակին, Յակոբին, Մովսէսէն մինչեւ մեր եկեղեցւոյ հայրերը՝ Լուսաւորիչ Գրիգորէն՝ Պարթեւն Ներսէս, եւ Սահակ-Մեսրոպէն մինչեւ Նարեկացին Գրիգոր, Շնորհալին Ներսէս ու Տաթեւացին Գրիգոր, եւ մինչեւ այսօրուան յայտնի ու անյայտ սուրբերը։

Կը խոստովանինք Քեզ, ո՛վ Արարող կենդանութեան։ Դուն արարչութեանդ հինգերորդ օրը ծովային եւ երկնքի կենդանիները ստեղծեցիր, ըսելով՝ «Հանցեն ջուրք գեռունս շնչոց կենդանեաց, եւ թռչունս թեւաւորս ի վերայ երկրի ըստ երեսաց տարածութեան»։ Ծովային կենդանիները նման են մեր զգացումներուն եւ մտածումներուն, իսկ երկնքի թեւաւորները՝ մեր խօսքերուն որ շրթներէն կը թռչին։ Դուն, Տէր, կը բուծանես մեր հոգիին եւ մտքին բոլոր շարժումները, ըստ պատուիրանին թէ՛ Ով որ Հօր կը դիմէ՝ լաւագոյն պարգեւները պիտի ունենայ։

Կը խոստովանինք Քեզ, ո՛վ Աննման Նմանեալ։ Դուն արարչութեանդ վեցերորդ օրը ըսիր. «Հանցէ երկիր շունչ կենդանի ըստ ազգի, չորքոտանի եւ սողունս եւ գազանս երկրի ըստ ազգի»։ Եւ ստեծեցիր անասնական բազմութիւնները։ Ապա արու եւ էգ արարեցիր մարդը ըստ պատկերիդ եւ ըստ նմանութեանդ, ըսելով՝ «Արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան»։

Յետոյ զայն պատասխանատու կարգեցիր երկրին. անոր տէր ըլլալ պատուիրեցիր։

Եւ արարչութիւնդ բարի էր մինչեւ այն օրը՝ երբ ստեղծագործութեանդ տնտեսը՝ մարդը մեղքին յանձնուելով ինկաւ եւ իր ազատութիւնը կորսնցուց։ Արդ, ամբողջ ստեղծագործութիւնը ակնդէտ կը սպասէ փճացումի դատապարտութենէն իր ազատագրութեան։

Խաղաղութիւն ամենեցուն։

Աստուծոյ երկրպագեսցուք։

Կը հաւատանք, ո՛վ Նորոգող Տէր, որ Որդիդ՝ մարմնացեալ Բանն Աստուած, մասնակից է զօրութեանդ։ Դուն անով արարեցիր թէ՛ երկինքը եւ թէ՛ երկիրը, եւ ամէն ինչ՝ թէ՛ երեւելիները եւ թէ՛ աներեւոյթները։

Ան է սկիզբը կեանքին, եւ անով կը սկսի նոր ստեղծագործութիւնը, որ ժամանակներու վախճանին պիտի հասնի իր կատարման։

Առաջին մարդը՝ Ադամ ստեղծուեցաւ իբր շնչաւոր մարմին, իսկ երկրորդ մարդը՝ Քրիստոս կենդանարար հոգի է. առաջին մարդը երկրէն էր եւ հողեղէն, մինչ երկրորդ մարդը՝ մեր Տէրը, երկինքէն է՝ Հօրմէ։ Ան ըսաւ. «Ձեզի համար լաւ է որ ես երթամ, որովհետեւ եթէ ես չերթամ՝ Մխիթարիչը պիտի չգայ ձեզի. իսկ եթէ ես երթամ՝ զայն պիտի զրկեմ ձեզի»։ Որդին առ Հայր գնաց, բայց որք չձգեց իր նորոգել սկսած ստեղծագործութիւնը։ Ահա Ս. Հոգին, որ ճշմարտութիւնը կը յայտնէ, կ'առաջնորդէ ամբողջական ճշմարտութեան, երբ ստեղծագործութիւնը մաքուր եւ լուսափայլ բեհեզ պիտի հագնի Նոր Երկնքին եւ Նոր Երկրին ներքեւ։

Եւ փա՛ռք Ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ժ.

«Ս. ԶԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ»

ԺԱ.

«ԸՆԿԱԼ, ՏԷՐ»

ԺԲ.

«ԵՒ ՏՈՒՐ ՄԵԶ...»

ԵՐԵՍՆՕՐԵԱԿ

Երեքշաբթի, 28 Ապրիլ 2009

19.00 Ֆիլմի ցուցադրութիւն՝

“The Chronicles of Narnia: Prince Caspian“

Հրագրեր, 30 Ապրիլ 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնք, 03 Մայիս 2009

ԿԱՐԱՐ ԿՐՈՆՔ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրեր, 07 Մայիս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնք, 10 Մայիս 2009

ՏՕՍ ԵՐԵՒԱՆ ՍՈՒՔ ԽԱՅՐ

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Երեքշաբթի, 12 Մայիս 2009

19.00 Երիտասարդական զրոյց՝

«Ուխտատեղիներ եւ Սրբավայրեր»

Հրագրեր, 14 Մայիս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնք, 17 Մայիս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագրեր, 21 Մայիս 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնք, 24 Մայիս 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

ՀՐԱԿԵՐ ԲՈԼՈՐԻՆ

Chronicles of Narnia: PRINCE CASPIAN

Ֆիլմի ցուցադրութիւն

եւ

Չրոյց

ԵՐԵՔՇԱԲԹԻ 28 ԱՊՐԻԼ 2009

ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍՆ 7.00

թիւ 3 սենեակ

Յաւելեալ տեղեկութեան համար հեռաձայնել
դիւանատուն՝ 514 331 5445 x202

ՍՈՒՐԲ ԶԱՏԿՈՒԱՅ ԻԻՂԱԳԻՆ

Ս. ԶԱՏԿՈՒՅ ՏՕՒՐՆ ԱՌԹԻ,
ՎԱՏԱՀ ԵՆՔ,
ՈՐ ՃԵՐ ԲԱՐԵՊԱՇՏ ԺՈՂՈՎՈՒՊԻՆ
ՊԻՏԻ ԶՈՌՈՆԱՅ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԻԻՂԱԳԻՆԻ ԻՐ
ԱՐՏԱՔՐՈՒՄ ԱՌԻՐԱՏՈՒԹԻՒՆԸ:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհներ փափաքող
ընտանիքները,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
թիւին,
կամ՝ 514 909 5203 թիւին:

Նախորդ թիւերու կրեք գտնել
www.sourphagop.org/lradou
կայքէջին վրայ